

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24, կիրակի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի.

1915 թ. ապրիլ...

Գարնան ու ծաղկումի այս ամիսը, վաթսունութ տարիներ առաջ, լացի ու կոծի ամիս դարձաւ Արևմտյան Հայաստանի ողջ հայության համար:

Երիտթուրք կուսակցության պարագլուխները, օգտվելով 1915 թ. պատերազմական տարիների իրադրությունից, մեղքը գցելով հայերի վրա, թե իբր նրանք պատրաստվում են ապստամբության, սկսում են գործի վերածել իրենց բարբարոս ջարդարարական ծրագիրը, ծրագիր, որի գաղանային իրագործման համար պահանջվեցին օրեր, ամիսներ... և մեկ ու կես միլիոն անմեղ կոհ: Աշխարհում մինչ այդ կատարված ոճիրներից ամենաողբերգականն ու մեծագույնը, ամենաանմարդկայինն ու ամենադաժանը: Ոճիր, որի միակ նպատակն էր՝ բնաջնջել խաղաղ ու աշխատասեր մի ժողովրդի, որի արմատները գալիս էին դարերի խորքից, այրել և ոչնչացնել այնպիսի մի բարձրարժեք մշակույթ, որի հիմնաքարն էր «Ճանաչել վիմաստութիւն և վխրատ, իմանալ վբանս հանճարոյ»:

Արյունարբու թշնամին իր «սրբական» գործը կատարելու համար այրեց, սրի քաշեց, խեղդամահ արեց, խաչեց ու ցցի հանեց բյուրավոր անմեղ մարդկանց, բայց չարը չհագեցավ: Արյունոտ ձեռքերով դահիճները իրենց հայրենի գյուղերից ու շեներից բռնի տեղահանված հայերին քշում էին դեպի արևակեզ անապատները, ուր սովն ու ծարավը և բնության դաժան պայմանները ամեն օր հնձում էին հարյուրավոր ծերերի, կանանց և երեխաների կյանքեր:

Քայլում էին տանջահար «քարավանները» ...քայլում էին դեպի անհայտություն... գնում էին դեպի անմահություն:

Անցան այդ տարիները: Վերածնված հայ ժողովուրդը բուժեց անցյալի իր վերքերը, նոր ուժով և նոր թափով կերտեց ու շենացրեց իր հայրենիքը՝ փառապանծ Սովետական Հայաստանը: Հայ ժողովուրդը ապրեց, որովհետև, ինչպես իր գոյության բոլոր դարերում, այնպես էլ այս անգամ «մահուամբ վմահ կոխեաց»: Ապրեց նրա ապատատենչ ոգին:

Եվ ապրիլյան այս արևաջունչ գարնանը, հայ ժողովրդի վավակները, աշխարհի որ ծայրում էլ լինեն, նշում են իրենց բազմաչարչար նահատակների հիշատակը:

Ժամը 10.30-ին Հայոց Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Սիոն, Տ. Ներսես սրբազանների և Մայր Աթոռի երիտասարդ վարդապետների և սարկավագների, այցելում է Ծիծեռնակաբերդ:

Վեհափառ Հայրապետի հետ Ծիծեռնակաբերդ են այցելում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ավտոմեքենաների շարասյունը մոտենում է Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողին: Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ թափորը դանդաղաքայլ մո-

տենում է հուշարձանին: Նորին Սրբությունը և երկու սրբական հայրերը կարմիր և սպիտակ մեխակներով միահյուսված Քրիստոսի խաչը խորհրդանշող ծաղկեպսակը կետեղում են հուշարձանին: Այնուհետև, կոմիտասյան հոգեվայլ և խորհրդավոր մեղեդիների հընչյունների ներքո, թափորը շարժվում է դեպի անշեջ կրակը, որտեղ Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված հայ նահատակների հիշատակին:

Ժամը 11-ին Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը և «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» (Մարկոս ԺԵ 34) բնաբանով սրտառուչ մի քարոզ է խոսում՝ ոգեկոչելով անմոռաց հիշատակը մեր նահատակների: Ապա պատարագիչ հայր սուրբը ընթերցում է համայն հայությանը ուղղյալ Վեհափառ Հայրապետի ուղերձը՝ նվիրված Ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակին:

Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ աշխատավորությունն ու հավատացյալների հոծ բազմությունը, որոնք եկել են իրենց գլուխը խոնարհելու հայ նահատակների հիշատակի առաջ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է դեպի մայրավանքի հյուսիսային կողմը, դեպի Եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան-կոթողը: Հուշարձանի մոտ Նորին Սրբության նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ:

Ժամը 15.30-ին հոգևոր ճեմարանի սանները, գլխավորությամբ փոխտեսուչ Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանի, մեկնում են Ծիծեռնակաբերդ՝ ծաղիկներ դնելու և գլուխ խոնարհելու Ապրիլյան եղեռնի հուշարձանի առջև:

Երեկոյան ժամը 19-ին, ինչպես ամեն տարի նույն օրը, հանրապետության մեջ հայտարարվում է Լռության րոպե: Ողջ հայությունը մեկ րոպե լռությամբ իր հարգանքն է մատուցում անմեղ զոհերի սուրբ հիշատակին: